

ՔԱՆԱԿՆԵՐ

Պուշկուրիյի համար  
 արեկան: 12 շաբաթ  
 վերջնական: 6  
 Արևմտահայաստանի  
 համար արեկան: 15  
 վերջնական: 8  
 Ստամբուլի համար  
 արեկան: 3  
 վերջնական: 1.50  
 կաշվե լիճակով

Մանուգրան սուրբ սուրբ  
 ծիսերի համար: 40 ս.  
 վերջնական: 20 սանտիմ  
 համար: 20 սանտիմ  
 սուրբի անկախություն համար  
 20 ս. վերջնական

Վառնայի համար: անոթի 10 սանտիմ

# ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇՈՒԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇԱԲԱԹՈՒՄԻ ԼՈՐ ԲԱՃԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԱՆԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԿԵՐՆԵՐ ԿԱՏԱՐԵ

W. 4.  
 R. P. Kalémcarian,  
 (Autriche)  
 Mechumstrassengasse  
 Vienne

Redaction du journal  
 Charjoun  
 Varna (Bulgarie)

( 20 ՍԱՆՏԻՄ )

Պուշկուրիյի համար: անոթի  
 = 15 ՍԱՆՏԻՄ =

## ՈՂՋՈՅՆՆԵՐՍ

Ո՛վ հայրենի դու զեփուս,  
 Փրչէ՛ յաւէտ, անխորտ.  
 Եւ ալիքներ յուզէ բիւր,  
 Հագուոյ ծովուն մէջ պղտոր:

Երբ կը թո՛ւս ողջոյն տաւ,  
 Հայոց հպարտ Մասիսին,  
 Ո՛վ շունչ քարնան տար իմ ալ  
 Ողջոյններս միասին:

Հոն վե՛հ լերանց մէջ չրքեղ  
 Մըլի հայու մանուշակ,  
 Պագի՛ր անոր կապտապեղ,  
 Ազար աչքէն անուշակ:

Իր տենչալիք, թրթուս  
 Բոյրը գգուէ՛ դուն զգուշ,  
 Փայփայէ՛ կոյս թերթերուն  
 Թաւիքը թարմ ու քնքուշ:

Ողջունէ՛ դաշտ, տունկ, արօտ,  
 Մովը, լիճը և առուն,  
 Ըսէ՛ որ կայ նոնց կարօտ  
 Նժգե՛հ հայ մը հոս հեռուն:

Սէզ ժայռերու դեղին քով  
 Տնս հերոսը անըկուն,  
 Որ կը կուռի իր գէնքով,  
 Արի՛, հըզօր ու սողուն:

Պատմէ՛ թէ հոս է՞ր հայի  
 Հոգիս իղձով տոչորուն,  
 Թա՛ւ լվայրը մահայի,  
 Գովը արո՛յր քաջերուն:

Տար ո՛վ զեփուս, տար արագ  
 Ողջոյններս ու համբո՛յր  
 Այդ քաջերուն երկնառաք  
 Եւ իրենց զէնքին մահամբո՛յր:

ՎԷՏԱ

## ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Եթէ կայ մեզ—Պուշկուրիյի հա-  
 յրուս համար «տեղական» ամս-  
 նէն կարելոր և միանգամայն ա-  
 մենէն բարդ խնդիր մը՝ այն ալ  
 անկասկած մեր կրթական խն-  
 դիրն է:

Թէ որչա՞փ անձնական կիր-  
 քեր, ինչ եսական հաշիւներ կը  
 շըլին այս խնդրին բոլորաթիւր,  
 Ինչ աստիճան ստոր դաւերէ կը  
 շըջապատուի շատ անգամ ան և  
 Ինչ անմիա խոչնդոտներ կուզեն

երբեմն հասնել անոր դէմ. սա-  
 կայ մենք արդէն շատոնց գի-  
 տենք:

Մէկը հակառակ էր կիզիչ տեն-  
 չերուն թէ զական չի կրնար ընտ-  
 րուիլ և յանկարծ կը քանենս որ  
 վարժարանի նախկին ամենաշեք  
 պաշտպանը՝ ամենամեծ ոխերի-  
 մը կը լլայնոր. ուղղակի թա-  
 ղականութեան չի ազդեր իր  
 հարուածները այլ վարժարանին  
 դէմ, վարժապետներուն դէմ:

Ուրիշ մը, սորստիքի յաւակ-  
 նոտ մը, կը պահանջէ որ թա-  
 ղական, հոգաբարձու, վարժա-  
 պետ, ժողովուրդ, բոլորն ալ  
 ճիշդ իրեն պէս մտածեն, նշա-  
 նագիծ մը անգամ չի զիջանիր  
 իր առաջին խօսքէն, և երբ չըլ-  
 րար իր ուղածին պէս, կը մերժէ  
 ու է կերպիւր օգտակար ըլլալ  
 վարժարանին, կը ձգնի ամեն  
 բան տակնու վրայ ընել և իր  
 միայն իր անձնական մտածումնե-  
 րու կազապարներով ձուլել ամեն  
 բան:

Երբորդ մը «մենք ապա» է. կը  
 հրամայէ որ այն ինչը կոչեն  
 պաշտօնի. այնինչը չը կոչուի, և  
 «մենք ապա» կը բարկանայ վար-  
 ժապետներուն դէմ, վարժարա-  
 նին պէմ, ազգին դէմ, սանթիմ  
 մը սղագային տուրք չը վճարեր,  
 ինչ որ ալ կատարուի ազգային  
 գործերու մասին, ով որ ալ գա-  
 նուի անոնց զուլը, կանխադա-  
 տապարտուած է անկէ «մահա-  
 ցու» (?) հարուածներ ընդունե-  
 լու:

Եւ բոլոր այս խնդիրներուն  
 մէջ ի հարկէ մամուլն ալ—քանի  
 որ մամուլ մըն ալ ունինք հիմա—  
 ունի իր մասնաւոր, իր մեծա-  
 գոյն դերը:

Ո՞վ ըսաւ թէ հանրային խն-  
 դիրներուն օգտակար ուղղութիւն  
 մը տալու գործին մէջ ամենամեծ  
 բաժինը չի յնար մամուլին, այն  
 մամուլին, որ արդէն իր գոյու-  
 թեան իրաւունքներէն մին պիտի  
 կորսնցնէր առանց ատոր:

Սակայն ո՞վ ըսաւ թէ մենք ի-  
 րաւունք ունինք ընթերցողնե-  
 րուն կարգացնելու շարունակ

պատուելական կոչուներ, մեր  
 թերթերը լեցնելու այն ինչ քա-  
 ղաքի՝ ազգային գոյն հազցուած  
 բայց զուտ անձնական կիրքէ ա-  
 ռաջ՝ ճկած պառակտումներու  
 պատմութիւններով:

Ահաւասիկ ինչ ի որհրգածու-  
 թիւններ ներշնչելու մեզ վեր-  
 ջերս նուազ յէն գրուած և ան-  
 զական թերթերու մէջ ապուած  
 երկայնապատում՝ թղթակցու-  
 թիւններ: Մենք անկեղծօրէն  
 խօսելով, չենք կարծեր թէ,  
 գոնէ նուազ յէն գորս, ախոր-  
 ժախով կարգացուած ըլլան և ըն-  
 թերցողներուն ձանձրոյթ պատ-  
 ճառած չըլլան անոնք:

Այնու ամենայնիւ մեզի հա-  
 մար անտարբերութենէ աւելի  
 բան մը պիտի ըլլար լսելը՝ կար-  
 գալէ վերջը այն շարունակ  
 գրութիւնները, որոնց ետին բա-  
 լորովին տարբեր գոյններով խն-  
 դիրներ կը թաքչին, և ինչո՞ւ  
 չը մերկացնել զանոնք. նոյն իսկ  
 եթէ զգուշի ըլլալու ստորճան  
 անախտով ըլլայ մեզ համար ընել  
 այդ բանը:

Կուեցնենք. նուազ յէն մը ազ-  
 գային կեանքը եթէ ոչ բոլորո-  
 վին գոնէ մասամբ կրնայ նմանիլ  
 Վառնայի մը Ռուստուբի մը ազ-  
 գային կեանքին. ինչ որ կը  
 գառնայ այսօր նուազ յէն մէջ,  
 վաղը նոյնը կրնայ պատահիլ ու-  
 րիշ քաղաքի մը մէջ և փոխա-  
 դարձաբար: Մէկուն համար ըս-  
 ուածը կատարելապէս կրնայ յար-  
 մարիլ նաեւ միւսին:

Եւ ճիշդ այդ պատճառներով  
 է որ մենք չենք կարծեր թէ  
 զմկամակին «ՆՍՐԹՈՒՎ» քն-  
 թերցողները՝ եթէ փափաքինք  
 յաջորդ մէկ յօդուածով—միշտ  
 համառօտ ու կտրուկ ըլլալու պայ-  
 մանաւ—չիրենք բղա՛ծ նուազ  
 տանիլ, հոն մօտէն տկնարկ մը  
 նետելու համար խտոնաշփոթ  
 գոյններով ներկայացուած ազգա-  
 յին գործերուն վրայ, մանաւանդ  
 որ, ճիշդը, հիմա կը քաջուի  
 նուազ յէն ապրելի վերջերը իր  
 գալար, թաւուտ լեռներով, իր  
 համբաւաւոր «քէօջքերով», իր

թեթեւ, քույր, սքանչելի ջու-  
 րով, իր կենսաբոյր օգով, իր  
 հիանալի գարունով:

Տիգրան Աճեմեան

## ՌՈՒՍԻԱ

Ենննարին է ծածկել կարեւոր-  
 թիւն այն շարժումն որ այժմ ե-  
 րեսան կուգայ Ռուսիոյ մէջ:

Վերջերս տեղի ունեցած դէպքերը  
 ծանօթ են մեր բնիկ բոցողներուն:  
 Տասնեակներ օր առաջ, Բեթերպուր  
 կէն հեռագիր մը կը ծանուցանէր  
 ներքին գործոց նախարար Սթեպի-  
 նի սպանումը: Թիկնապահի համազ-  
 գեստով երիտասարդ մը կը ներա-  
 յանար և անսակցութիւն մը կը խնդ-  
 րէր նսխարարէն: Երբ անոր գիմա-  
 ցի կը հանուի, երիտասարդը բերան  
 բերնի բէզովքէրի հինգ հարուած կը  
 պարպէ անոր վրայ: Նախարարը, որ  
 երկու ժամ յետոյ կը մեռէր, ա-  
 խօսքը արտասանած է. «Ի՞նչու կըս-  
 պանեն զիս. մէկուն չարիք մը բրած  
 ըլլալս չեմ գիտեր»:

Սպանիչը հայցափորձուելով յայ-  
 տարայեց թէ—Վիլի համալարանը  
 ուսանող էր, իէ վերջին խոսովո-  
 թեանց հետեւածօք վատրուած էր.  
 և իբրև պատիժ զօ, աղուցի մը մէջ  
 գրուած, թէ եւ կա, սոր ներած էր ի-  
 րեն, բայց ինք զիւր թոփ չըր եղած:  
 Հազիւ այս սպանութիւնը գոր-  
 ծուած, կրթական նախարար զօր-  
 վար Վանովսքի իր հրատարականը  
 կուտար: Կառավարական թերթը կը  
 յայտարարէ որ զօրավարը հրատարած  
 էր տարիքին ու ֆիզիքական սկա-  
 րութեանը պատճառով, Բայց ոչ-պաշ-  
 տօնական ազդիւրէ կը ծանուցուի թէ  
 ան հրատարած էր ըստ որում վերէն  
 սօժ արուած չէր իր կրթական բա-  
 րենորոգման ծրագիրներուն:

Վերջապէս, այս սպանութեան և և  
 համալարանական շարժումին հետ  
 հեռագիրները կը ծանուցանեն բան-  
 ւորական շարժում մը: Բեթերպուր-  
 կի մէջ, Քազանի հրապարակին վը-  
 րայ ցոյցեր տեղի են ունեցեր: Ինչ  
 խոսովութիւններ ծագեր են հարաւի  
 ճարտարագործական կեդրոններուն  
 մէջ: Սպաներ ձեռք սկալուեր են՝ ու-  
 սանողներու և բանտարկու հետ  
 մեղսակցութեան յանցանքով:

Հիմակուսն այս դէպքերն բմբուն-  
 լու համար՝ հարկ է անոնց սկզբնա-  
 պատճառին դիմել:

Համալարանական խոսովութիւն-  
 ները ան ստեն շատ ծանր հանգա-

մանք չունէին—1888ին սկսած են, 1884ին է որ ջնջուած էր 1863ի համալսարանական ազատական կանոնադրութիւնը եւ անոր տեղ ուրիշ կանոնադրութիւն մը տրուած էր որ «հովանաւորութեան կենթարկէ համալսարանները եւ կասկածանք կը վարուի թէ ուսուցիչներուն եւ թէ ուսանողներուն հետ ու Պահ մը վարանում եւ չփոթութիւն տիրեց, վասն զի ոչնչական եղեանագործութեանց եւ Ալիքսանտր Բ. ի սպանն ման կը յաջորդէր ան, Բայց յետագէմ տնօրինութեանց պատճառով զգոհութիւնը թէեւ պահ մը զսպուած կը սկսէր երեսն գալ 1888ին: Ուսանողներուն պահանջները զիստաւորապէս երկուք էին. վերահաստատել 1863ի կանոնադրութիւնը եւ իրարուէք տալ իրենց որ հաւաքուին իրենց շահերուն վրայ վիճարանելու համար: Եւ յայտնի բան մըն է որ ուսանողը մանաւանդ երկրորդ պահանջման որ աստիճան կը շահագրգռուի:

Այդ վայրկեանէն սկսեալ խոռվութիւնները պարբերական կըլլան. իրարու կը յաջորդեն եւ իրարու կը նմանին:

Մտտի պատճառներէ առաջ կուգան անոնք, Փողոցին մէջ հաւաքում տեղի կուենանայ: Տրուելու հրաման կը տրուի: Մերժում: Միջամտութիւն ոստիկանութեան եւ քաղաքներու: Խմբովին ձերբակալութեան կարելի է ըսել թէ վերջին տասը տարուան ուսանողական ամբողջ սիրունքը անցած է Պոլսի իրարմէն բանակէն, Մոսկուայի մէջ: Զերբակալութեանը չեն դատուիր: Վարչական պարզ տընօրինութիւն մը կը բաւէ ուսանող

մը արտաքսելու համալսարանէն, ընտանիքին դարձնելու զայն կամ ցոյց տալու անոր ընկալվալը մը ուսկից չի կրնար շարժիլ:

Մնաց որ այս ցոյցերը սահմանափակուած չէին միայն: Ո եւ է համալսարանի մը մէջ խոռվութիւններ ծագեցան մի, Մոսկուայի մէջ օրինակի համար, անմիջապէս. վատողի պատրուի նման, շարժումը կը տարածուէր կայսրութեան միւս համալսարանները, Խարքով, Բիւլդ, Քասան, Եւն: Մինչեւ այն առին, ան կարգութիւնները զուտ համալսարանական էին: Համալսարանը քանի մը օր գոց մնալէն յետոյ, դասերը կը վերսկսէին օրինաւորապէս:

1897ին սկսեալ շարժումը նոր երեւոյթի մը կասկածայ, աւելի ընդարձակ եւ աւելի խորակ, Համալսարանական պահանջներուն ետին կը պահուէր քաղաքական պահանջները:

Ալեքսանտր Բ. ի մահուան ատեն, որու ժողովուրդը մեծ յոյսեր սնուցած էր Մահմանադրութիւն մը կը սպասէր, գէթ նախնական վիճակի մէջ, 1897ին: Եւ յոյսը կը կարէ եւ յոսովրիպումը ի յոյս կուգայ գործնականապէս: Եարժումը թէեւ նուազ յեղափոխական քան 1870—80 տարիներունը, աւելի ընդհանուր է: Միապետական սկզբունքին դէմ չէ պայքարը. բայց աւելի մարդ կը բազմայ: Արեւմտաքէն եկած գաղափարները հետ աւելի հաշտ ըլլած մը: Բոլոր դասակարգերը, զեղացիներէն մինչև ի բարձր անձնաւորութիւնները, կը բազման, ոչ թէ յեղափոխութիւն մը, այլ քաղաքական ըլլածին կերպարանափոխութիւնը: Հետեւապէս ուսանողները ալ ա-

նանձին չեն: Ամբողջ ատենք անտարբեր եւ նոյն իսկ թշնամի էր իրենց: Սոսիալականաց ատեն, ուսուցանութեան դերը կրկին էր. մէկ կողմէն բարեկարգութիւնը պիտի պահպանէր եւ միւս կողմէն ուսանողները պիտի պաշտպանէր ժողովուրդին դէմ: 1897էն սպին, ժողովուրդը կսկսի օրինաւոր գտնել ուսանողներուն պահանջները եւ ամբողջ կը համակրի անոնց:

Ուսանողները օգուտ կը քաղեն այս համակրութեանէն եւ գործելու երկու զլրատու միջոցներ կը նարին: Առաջինն է՝ ընդհանուր գործադուր: Երկու տարիէ ի վեր գործադուրը գուր գաղար չունի: Բարձրագոյն դասերը ընդհանուր ան է իրաւ, զեւ բժշկիչներ եւ փաստաբաններ կը հասնին կոր, քննութեան յանձնաժողովներ կան, բայց դասընթացներ չկան այլ եւս, որովհետեւ ունկնդիր չկայ:

Երկրորդ միջոցն է «գործաւորներուն երթալ»: Ուսանողները անոնց կիրթան, այլ եւս ոչ անջատ անջատ ինչպէս ոչնչականները կիրթան ին ժողովուրդեան, այլ արտօնուած հրապարակախօսութեան ու ժողովրդային համալսարաններուն ճամբով:

Այս բոլորակները այլափոխելու ժողովուրդեան զգացումները: Անցեալ տարի, Մոսկուայի խառնակութեանց միջոցին, ուսանողները չհանդիպեցան ատաղձուան թշնամութեան: Նոյն իսկ պաշտպանուեցան Օստրի Ռիւսի մտաւճառներէն: Թուրքոյ իրարանցումին մէջ գտնուելով, ամբողջ սկսեւ աղաղակել. «կեցցէ՛ թուրքոյն»: Այս աղաղակը երկու տարի առաջ չէր կրնար արձակուիլ: Համալսարանական խառնակու-

թեանց վրայ եկան պատասխանելու բաներական խառնակութիւնները, որոնց հետ սերտ յարաբերութիւն ունին: Ռուսոյ մէջ ճարտարագործութեան ծնունդն ու զարգացումը իրարեւ անտանջ ունեցան նոր դասակարգի մը երեւումը. խառնակական գասակարգը, եւ խոռվարարները եւ չեն կրնար այս նոր սարքերը օգտակարապէս գործածել:

Այս է ծագումը այն զէպերուն որ վերջին ատեններս յուզեցին Ռուսիան եւ որոնք Եկան յանդեցան Միւրիակինի սպանութեանը եւ վանդութիւն շրտճարմանը:

Այս հրաժարումը կապուի ան փոփոխութեանց հետ որոնց ենթադրուած է ուսմանց դրութիւնը դարու սկիզբէն ի վեր: Անցեալ դարուն ըսկիզբը, դէպի 1825ին, Նիքոլայ Ա. դասական ուսմանց վերադարձով յառաջ եկած շարժումը նախապատուութիւնը բնական վիտութեանց կուտայ: Յիսուս տարի ետքը, այնպէս կը կարծուի թէ ոչնչականութիւնը ծնունդ առած է դաստիարակութեան այս եղանակէն, որով գարձեալ դասական դրութեան կը վերադարձան:

Եւ անա հիմակ ալ դասականութիւնը վերստին կը նկատուի իրբեւ սկզբնապատճառ շարժքին: Պ վանդութիւնը ծրագրի մը կը պատրաստէ որուն մէջ լատիներէնն եւ յունարէնը տեղի կուտան բնական եւ բարոյական գիտութեանց: Այս ծրագրի շատորագրուելուն, վանդութիւնը գործէ կը քաջուի: Մնաց որ այդ պաշտպանը չու ծանր էր իր տարիքին համար եւ կայսրը իր երախտագիտութիւնը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա. ԳԼՈՒՆ 1

Մի քիչ հանգստանալուց յետոյ, Մաղիկեանը կայսրանից գուրս եկաւ կառք փնտռելու ճամբան շարունակելու համար: Երկաթուղու գծի վրայով նա անցաւ մօտակայ հրապարակը, ուր բազմացեղ մայրիկ թափար, կարախի, հրէա, ռուս, հայ այս ու այն կողմ ցորեն էին չափում: Կատարեալ Բարեկենեան խառնակութիւն էր տիրում, ցորենալուծանների ճարպիկ, այսինքն խարյախ, գործակատարները իրենց ամբողջ շնորքը թափում էին պարզամիտ գիւղացիներին խաբել, ցորենը շատ աւելի աժան գնելու: Այդ ժխորի մէջից լսվում էր ուսական գալմօնիկի ձայնը, արեւածաղիկ սերմեր ծախողների հրաւեր, հարբածների երգեր...

Մաղիկեանը որոշեց մտնել ամբողջի մէջ, եւ դեռ մի քանի քայլ չէր արել, երբ նրան մօտեցաւ մի հրէա միջնորդ՝ աչքերը փայլեցնելով, որս գըտած աղւէսի նման:

— Ի՞նչ էք ուզում գնել պարոն, առեց նա. Ռուսերէն լեզուի հոգին հանելով, ցորեն, փետուր, բո՛ւրդ: Ես պատրաստ եմ ձեզ ծառայել. ամենայն սիրով, դուք լաւ պարոն էք երեւում, կարծեմ ես ձեզ հետ մի

քանի անգամ արդէն գործ եմ ունեցել:

— Ոչ մի անգամ ինձ հետ գործ չէք ունեցել, եւ ես ոչինչ չեմ ուզում գնել, բարկանալով պատասխանեց Մաղիկեանը, հեռացէք ինձանից:

Բայց հրէան չուզեց այդքան դիւրութեամբ փախցնել իր կարծեցիկ որսը ու բողբոջէն քծնող կերպարանը ընդո նեղով շարունակեց.

— Բայց պարոն, ի՞նչու էք բարկանում. անշուշտ դուք մի բան գնելու համար էք եկել այս շուկան. անշուշտ ձեզ մի միջնորդ է հարկաւոր, որովհետեւ դուք օտարական էք. այդ ես անհնում եմ. ուրեմն ինչո՞ւ ես չը լինիմ ձեր միջնորդը, միեւնոյն է մի ուրիշը սէտք է կատարի այդ ծառայութիւնը, աւելի լաւ չէ՞ որ ես կատարեմ:

Մաղիկեանը բողբոջէն զըզվեց, ուզում էր աւելի կոշտ պատասխան տալ, բայց հրէա միջնորդի քծնող կերպարանը մի պիտեմարթում փոխվեց, աւելի խոնարհ, պարզ խեղճութեան արտայայտութիւն ստացաւ:

Մաղիկեանը այդ այլակերպութեան հանդէպ լեզու վրայ պատրաստի կոշտ բայր կուլ ունեց եւ աւելի մեղմութեամբ պատասխանեց.

— Ես վաճառական չեմ պարոն, ճամբորդ եմ. պէտք է գնում Ռքաղաքը. ինձ կ'առք է հարկաւոր, վարձու կառք, եթէ անպատճառ ուզում էք ինձ մի ծառայութիւն անել, գտէք ինձ համար մի կառք: Ես ձեզ կը վարձատրեմ:

— Եատ լաւ, հոպ ինչո՞ւ չուտով չը ճացատրեցիք եւ այնքան ձեր արիւնը պղտորեցիք: Կառքեր չատ կան

բայց դեռ ոչ մի կառպան ճամբաչի ընկնիլ, ժամի շորսին կը մեկնեն. բայց գնանք այժմվանից խօսենք, որ վերջը աւելի սուղ լծարկ չստիպվէք:

Մաղիկեանը հրէայի առաջնորդութեամբ գնաց կառպանների մօտ: Հրէան նրան ներկայացրեց մի տարից թաթարի, համաձայնութիւնը կայացաւ. Մաղիկեանը հյւանդին մի քանի կողակ էլ ներքեց եւ կառպանին պատերազմով որ ժամի շորսին գայ կայարան, հեռացաւ:

Կառքը վարձելուց յետոյ Մաղիկեանը դեռ երկու ժամ իր արամաղրութեան տակ ունենալով, որոշեց կրկին ընկնել այն մարդկային ժխորի մէջ ուր առեւտուրի եւր մարդկանց երկքարականացրել էր: Ես շատ թափառեց, շատ բան սեսաւ, շատ լաւ համոզվեց որ գիւղացու արեւն քրտինքով մշակած հողի արտադրութիւնը ամբողջովին ուկու է վերածվում, բայց ինքը գիւղացին այդ ուկուց շատ, շատ չնչին բաժին է ստանում: Ու մտածեց.

— Ազատ, անկախ ժողովուրդ, զօրեղ ազգ, որից սարսուռ է ամբողջ աշխարհը, կազմված այս պարզամիտ մարդիկներից, որոնք միշտ եւ միշտ, հարստահարված, ազքատ ու սղէտ են: Երբ ժողովուրդը կրկին ու կրկին ճնշված է: Ահ սերկաթուղին քաղաքակրթութեան գէնքը, տանում է մի ժխի քրտնաթոր աշխատանքի արգիւնք-հետուն, շատ հեռուն ոսկիի վերածելու:

Բայց այդ ոսկուց շահ չունի խեղճ մուծիկը, միջններից կազմված ռուս

ժողովուրդը: Գարջը նրա համար չի երկաթուղին նրա համար չէ, գիտութեան յառաջադիմութիւնը նրան ոչ մի օգուտ չի տալիս, նա նոյն մուծիկն է, ինչ որ հարիւր տարի առաջ, միայն գործիք. միայն հայրենիքը պաշտպանելու մտք պարկայ, միայն ցարերի գանձի հաստատուն պատուանդան...

Մաղիկեանը այս մտածումներով մէջ դուրս էլ գալիս ժխորի միջից կը նրա ուսին զիպչելով, անցաւ մի ոստիկան սպա գննողական ակնարկ նետելով նրա վրայ: Մաղիկեանի գէմքը խոթուվեց. սպան սյդ նկատեց. եւ մօտենալով ասեց.

— Ներեցէք, պարոն. կարծեմ դուք այս կողմերից չէք:

— Ոչ, պարոն, այս կողմերից չեմ, եւ այսօր էլ պէտք է գնամ այստեղից: Կարճ կ'սրեց Մաղիկեանը եւ ասեց ուշադրութիւն դարձնելու շարունակեց գնալ, ինքնիքն ինքնիքն ինքնիքն:

— Այսպիսի էլ լքում թիւն, դիւմամբ հրում է, որ ներողութիւն խնդրելով խօսակցութեան ընկնիլ: Հրէան միջնորդը առաջ կտրեց որպէսզի մի քանի կողակ աշխատի, սա էլ հյուս է որպէսզի մի բրաւս ստանայ իր չէֆից: Ուր ուզում ես գնա Ռուսաստանի մէջ, սրանց ձեռքից ազատվել չը կայ:

Մաղիկեանը գնում էր դէպի կայարան, սրդէն մեկնելու ժամանակը մտանում էր. ոստիկանն էլ ետեւից հետեւում էր Մաղիկեանին, մարաղ մտած կատուի պէս:

(Շարունակելի)

գրաւորապէս յայտնած է անոր մա-  
տուցած ծառայութեանը համար :

Սիրիական յաջորդն է ինչպէս Այս  
անուանուածը նոր ուղղութիւն մը  
ցոյց յի տար Ռուսիոյ ներքին քա-  
ղաքացիական թերահալման մէջ : Պ. Կարապետեանը ինչպէս իր  
կերպով թէ զժողովները կու գին վի-  
րադառնալ ոչնչականութեան մեթո-  
տին :

Սիրիական յաջորդն է ինչպէս Այս  
անուանուածը նոր ուղղութիւն մը  
ցոյց յի տար Ռուսիոյ ներքին քա-  
ղաքացիական թերահալման մէջ : Պ. Կարապետեանը ինչպէս իր  
կերպով թէ զժողովները կու գին վի-  
րադառնալ ոչնչականութեան մեթո-  
տին :

ԽՈՅԻ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՅՐ

Անցեալ տարվայ «Շարժում»-ի թի-  
ւերից մէկում կարդացինք մի ճիշդ  
նկարագրութիւն «Երեւանական Օպորտունի-  
տի»-ի մասին :

Այժմ սոյն ընկերութեան մի ճիւղի  
մասին է լինելու մեր խօսքը : որը  
Պարսկաստանում ունի 2 որբանոց,  
մէկը Ուրմիում, իսկ միւսը Աստու-  
տանում : իսկ երկրորդում հայ որբ-  
որբուհիներ մօտ 111 հոգի :

Որչափ էլ մարդասէր կոչուին Գոկ-  
տար Լէքտուրիս սկսած միջին բոլոր  
միւս գործիչները այս ընկերութեան,  
այնու ամենայնիւ ես չեմ կարող լը-  
նել ու չը խղճահարել ինչ որբա-  
նոցի տխուր իրականութեան առաջ :  
Նախ եւ առաջ սրա ինչ տեղափոխ-  
ւելի մի մեծ սխալ է : իսկ ինչու  
այդպէս եղաւ : որովհետեւ Պատար-  
ձու-Բէրքում (\*) երեւակայում էր,  
թէ Սալմաստում կան հայ յիշատի-  
ւանականներ, որոնք կարող են խը-  
տում կամ շարժում առաջացնել և  
որբանոցի կացութիւնը վատնակել :  
այս առաջ եւ սրա նման յիմար  
պատճառներով է որ որբերը տանջ-  
ւում են ինչ վատ կլիմայի տակ :

Եթէ միայն բնութեան արտաբեր-  
ները լինեն, վնաս չունի : Արի՛ ու  
տես երկուուկէս տարի առաջ նշա-  
նակուած է ինչ որբանոցի կառավա-  
րիչ մի օրինակ, ազգաւ ռուս : սա  
բնաւորութեամբ սաստիկ ետասէր էր  
եւ բռնակալ, երբէք չէր սիրում հա-  
յերին եւ իւր սակեութիւնը երեւան  
հանելու համար պահում էր երկու  
աստի նախնիներ, որոնց ևւ առ-  
հասարակ ասորիներին շատ է սիրում :  
Այս կառավարչակալին՝ նախ կաս-  
կածեցաւ իւր բարոյականու-  
թեան մէջ, երկրորդ՝ որբերին  
չափազանց վնասեց անցեալ թուական-  
ներն մի հիւանդի եւ 4 ուսուցչի նոյն  
տարվայ մէջ զուրս գալու եւ հրա-  
ժարական տալու պատճառ դառնալով :  
Իսկ այդ ուսուցիչները երկուսը

Գեորգեան, ճեմարանն էին տարակել,  
որոնք ըստ Մանիա Հէնդէլմանի պի-  
տի հլու հնազանդ եւ կատարեալ  
քծնող լինէին իրան : այդ չէր կարելի  
սպասել մի ճեմարանականից : Եւ ա-  
շակերտներին արգիլել էր ազատ ըն-  
թերցանութիւն ունենալ, իսկ ընդ  
հակառակը Աստուածաշունչ եւ այլ  
հոգեւոր գրքերը կարգաւոր մեծ  
զարկ էր տալի : այնպէս որ աշակերտ  
ները գլուխը սնուած էր զուտ կրօնա-  
կան պատմութիւններով : որ ինչպէս  
յայտնի է շատ քիչ է մեր կեանքի  
ներկայ այլմաստներում :

Եզան մի երկու մոկացի եւ արիւն  
լեւնցի աշակերտներ էլ, որոնք ինչ  
քաղ տեսան որբանոցի միջնորդը եւ  
սիրեցին ազատ կեանքում ապրիլ եւ  
ձառայել հայ սօցիալական համար,  
եւ ոչ թէ ոչնչանալ այդ տեղ :

(Շարունակելի)

ԿԱԹՈՒԼԻԿ ՍԵՍԻՅԱՆ ԱՐԴԻՐԸ  
ՊԱՐՍՎԱՍՏԱՆՈՒՄ

Այդ գայրոցում տիրում է կրօ-  
նական նեղ ոգի, որն մանուկնե-  
րին պատաստել են աշխատում  
ունեն մի ողնեղով, որոնցից ա-  
ռաջինն կապում է այն հակա-  
մանկավարժական և հակաաղջա-  
կան կանոնն, որ ստիպում է 8  
տարեկան երեխաներին ամբողջ  
13 ժամ դպրոցում : իրանց հսկո-  
ւութեան տակ գտնվելուսն իսկ  
կիրակի օրերն : Պարզ է նպա-  
տակն—երեխաներին չորս պա-  
տերի մէջ պահելով ցանկանում  
են նրանց յարաբերութիւններն  
միմեկմիջ կտրել, չը թողնել  
և ոչ մի կապ արտաքին աշխար-  
հի հետ : որպէսզի նրանք մի  
միայն իրանց ազգեցութեամբ  
կաշիւադրվելով, իրանց հրօնա-  
կան գաղափարներով, քարոզ-  
ներով, ծէսերով և կարգերով  
անվին, տելի հնչում և սելի  
չուտ արժանի լինին «հերետի-  
կոսութեան» փոշին թափ տալու :

Չուր ենք մեզազրում, նրանք  
հերքում են այս բանը Երոպայի  
անուանով Ամբողջ 13 ժամ անընդ-  
հատ աշխատեցնել 8 տարեկան  
փոքրերին և միամիտներին հա-  
ւատացնել աշխատել թէ «եւրո-  
պական ուսումնարանների մեծա-  
մասնութեան օրինակին հետեւե-  
լով են այդպէս վարվում, աւելի  
քան ծիծաղելի է : Յայտնի է որ  
Երոպայում այդպիսի կանոն գո-  
յով թիւն չունի (Ֆրանսիական  
«մի քանի» հոգեւոր գայրոցներն  
հաշի չենք ստանում) : Կարծե-  
լով թէ մի մեծ մասա է այն հան-  
գամանքն, որ Ատրպատականի  
թեմական Եղիշէ Մ. վարդապետն  
էլ համակարծիք է, այլ եւս այս-  
չից բաց չեն թողնում : Մի երկ-  
րորդ այց էլ տեք Հ. Եղիշէին  
տեսէք ձեզ հետ համակարծիք  
կը լինի : Գոնէ խղճացէք մա-  
նուկներին առողջութեանն, այն

մանուկներին, որոնք, սկանա-  
տեաների տակով, դասերի մա-  
մանակ յոգնածութիւնից քնում  
են, իսկ պարտկերէն դասին  
դուրս քակն են վազում : շա-  
կերտները կարգաւոր աշխա-  
տանքն մալի չսփռնում չի թե-  
թեւանում, որ նրանք տանն  
պարաստելիք դասերն զպրա-  
ցում են սերտում : այդ միտնայն  
է, նրանց մանուկ ուղեղն յոգնում  
է հէնց գաս սրտա տելիս, չոր  
աշխատակին մեխած «մաւրիզի  
փոպոպային» ազգականով կեան-  
քից ազատելու համար միայն  
նրանք «աշխատում են իրակի  
օրերն անգամ իրանց հսկողու-  
թեան տակն ունենալ աշակերտ  
ներին» : Մարան հոգատարու-  
թիւն : Ետագինք մեր փոքրիկ-  
ներին էլ այնպիսի ուղեղներ, որ  
պէսզի մի-մի անմեղ հրեշտակներ  
գուրս գան, մանուանդ որ փո-  
պոպ «պականով» կեանքից ա-  
շխատելով նրանք—այդ կրկնակի  
հոգատար հայրերն երեխաներին  
եկեղեցի են տանում : ապրիլի,  
մունր դնել են ստիպեցնում,  
իսկ ազատ ժամերին քրիստ. վար-  
դապետութիւն են բացատրում,  
ճշմարիտ հաւատացեալներ անում  
հոգեպէս և բարոյապէս կրթում :

Ետագինք, սիթն ձեռքից  
բաց չը թողնենք :

Առաջին ամբողջ 3 ամսում ա-  
շակերտներն և ոչ մի օր արձա-  
կուրդ չունեցան թէ եւ տոնեք  
կային : Ի՞նչու : դուցէ իրանց  
մանկական մեղքերն քաւելու հա-  
մար և կարծում են, որովհետեւ  
ամեն այտարապիւն ներկայ էին  
գտնվում : Եւ այն աշակերտն,  
որ մեղքերից թեթեւանում էր—  
տրամադիր էր նրանց ատմանը  
ընդունելու, նա՛ ամառիկին  
ձնոցներին ուղարկելով տեղեկազ-  
րի առաջին տեղն դրանց «կրօ-  
նական վերածանդութեան» մէջ  
ամենամեծ թուանան էր ստա-  
նում : Մեղքերից ատելի եւս թե-  
թեւանալով նրանք հոգատար հա-  
յերից խաչեր, համարչներ և մե-  
տաչներ ստացան : բայց որպէսզի  
ոչ մի բիծ էլ չի մնայ իրանց  
մեղքերից միտուրի փոխանորդի  
հլու ծառաներն նրանց սովորեց-  
րին համարչներ զրա աղօթիւն  
և խաչն վիշն ունենալն : այլա-  
պէս ինչով բացատրել, կարծես  
բնաներով ստացված խաչերի,  
համարչների և մետաչների այն  
չառլ պարգեւներն որ աշակերտ  
ներն իրաւաւ ստացան «մօծսի  
հօր» ներկից Միթէ՛ մանուկներին  
զրաւելու համար էր, ինչպէս  
բողոքականներն են անում գա-  
նադան պատկերներով եւ այլն :  
Ո՞ր գիտէ, էլի՞, տե՛ս կրկին  
«խեղճութիւն» երբ մեկէկեւ  
քոյրերն իրաւելի գալով սկսեցին  
ներկայացումներ տալ, նրանք  
աշակերտներին խտուր արգիլե-

ցին ներկայ գտնվել ներկայացում  
ներին և ազատ յոճախողներին  
այդ արգելի դնելով, երբ տե-  
սան շոյ շկայ յորդոցիցի շը  
մանակցելի գոնէ : իսկ որպէս  
թեթեւալիս՝ ներկայացման նոյն  
իսկ ազատ յոճախողներն էլ ի-  
րատուք չունէին գնալ, հակա-  
ռակ պէպքում, պէտք է գայրոցն  
թողնելին : Մէկն միայն իր իրա-  
ւանքներն իր նախարարին տեանե-  
լով այդ արգելքով թողեց գայ-  
րոցն : կրօնական և եկեղեցի  
տէր մարդ չենք, ասում են նր-  
անք հրապարակով : լինել կրօ-  
նական, այն էլ կաթոլիկ մի-  
սիօնար և կրօնական լայն հայ-  
եացք ունենալ : Հաշտեցրէք  
միմեանց իմէ կարող էք : Բայց  
բաւական չէ աւելն, պէտք է  
ցոյց տալ կրօնական նեղ հայ-  
եացքի տէր չը լինողն երբէք ի-  
րան թոյլ չի տալ հայերին հե-  
րիտիկոս անուանել, յերմ պաշա-  
պանել պայի սրբութիւնն և ե-  
կեղեցիները պալա լինելն : Ժող-  
րել հայ եկեղեցու պաշտօնեա-  
ներին, ասել որ արտաքոյ կա-  
թոլ : Եկեղեցու չիք փրկութիւն  
և այլն և այլն :

(Շարունակելի)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Ռուստոք, 24 ապրի 1902

Թէ ինչու կուզեմ պատասխանել  
«Շարժում»-ի 407րդ թիւին մէջ Պ.  
Ս. Մանուկեան յուսանատ, վնասու-  
թեան մը բովանդակ դառնութիւնը  
ըմբռնելով ամեն միջոց գտնելու կը  
գտնէ յարձակելու համար նկարագ-  
րիս վրայ : Եթէ ես նախորդ իրդ-  
թեանց թանկանումս մէջ գովելի ու մեծա-  
բանէի Ռուստոքի «Հայկական Բն-  
ութեան»-ը անշուշտ կը լինէի սի-  
րելի ու լաւ նկարագրի տէր անձ :  
Պայտն Մանուկեան այս պարագային  
մէջ կը նմանի գիշերային առ շըջ-  
մուկի թիթեռնակներուն որոնք ի-  
րենց անոթ թեւեղներով կը սքնին  
լամպարի մը լոյսը մայելու բայց զժ-  
րաղաքար իրականութեւնը ասորեք  
կըւայ :

Չը պիտի խոսա տաք պարոն հրը  
ձեզ հարցուի թէ որն է լմ վերջն-  
ութեանց թեման մէջ այն միակ տո-  
ղը կամ բառը որ ինդրէն չեղած ըլ-  
լայ զլս. կամ չի պիտի խախտէ երբ  
ձեզ հարցնեմ թէ որն է այն աշակեր-  
տը որ չուկայի սրճարանները կը յո-  
ճախէ : Ամօթ է ամօթ . . . Պարոն,  
եթէ ձեր գրիչը ճշմարտութիւնը գը-  
րել չի դիտեր ձեզ կը խրատեմ որ  
կատրէք ու նեղեք : Լաւ է լուի քան  
թէ ստել :

Ռուստոքի «Հայկական Բնութեան»  
բանը յիշատի տաս տարիներէ ի վեր  
է որ գոյութիւն ունի, սակայն հա-  
մարձակ կարելի է ըսել որ սասը տա-  
րի ալ անընդհատ անոր կողմէն կը-  
պոճ է խաղաղանք : մէկ գոնէն կը  
մտնէ լուսաւորութեան ու դասի-  
րութեան ոգին իսկ միւս գոնէն խա-  
ղաւորութիւն, դարձեալ ստանց վարա-  
նելու կրնանք բալ որ այն տաւր  
տարուան շրջանին մէջ Ռուստոքի

(\*) Սա որբանոցի Սալմաստ գետ-  
նուած միջոցին դիտելիս էր, իսկ  
Պ. Միհրան Բաղդասարեանը ուսու-  
ցիչ և ծախսարար : սոքա վէճի բը-  
նուեցան իրար հետ, որի արգիւնքը  
անզափառութիւնը եղաւ :

Հայկական ընթերցարանը չէ կրցած գրասէր շրջանակ մը պատրաստել բայց եւ այնպէս կրցած է վարպետ խաղամոլներու խումբ մը ստեղծել:

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երէկուան-թիւ 410-«ՇԱՐԺՈՒՄ»-ի նստակիստուիով Պ. Պ. Ասլ. Տօնիկեանի և Հ. Գրիգորեանի (Շուսլա) հասցէին ըստած էր հետեւեալը:

Կենթարդեմ թէ այդ սողերուն պատճառ տուած է իմ և Շարժուի պիտրագրասիտին միջեւ անցած մասնաւոր խօսակցութեան մը առթիւ եղած թիւրիմացութիւն մը իմ կամ պիտրագրասիտին կողմէն:

Եւ նկատելով որ խնդիրը հրապարակ ելած է, ես լնծի պարտք կը համարիմ խնդրել Շարժուի յարգոյ խրատութեանէն որ հաճի ներկայս տակը պարզելու համար իրողութիւնը ինչպէս որ է:

Տեղա գտնուած միջոցիս ուրիշներու ներկայութեան եղած խօսակցութեան մը մէջ երբ հարցոցի պ. Ասլ. Տօնիկեանին թէ «ինչո՞ւ կը դիմէ ուրիշ թերթերու և չի զրկեր իր պատասխանները Շարժուին» ներքելու համար վերջինին մէջ իրեն դէմ և վարժարանին դէմ տպուած թղթակցութիւնները: «Պ. Տօնիկեան պատասխանեց թէ՛ իրենք շատ կը փափաքէին այդպէս ընել, բայց Շարժուի շրտպեր (՝) իրենց պատասխանները» 1 իրենց պատասխանները արդէն զրկած և մերժուած են թէ պատճառներ ունեցեր են հաւատարմութէ Շարժուի չը տպեր իրենց գրածները, այդ ես չեմ գիտեր:

Տիգրան Աճեւեկեան  
Վառնա 25 ապրիլ 1902

1) Նոյն բանը հաստատեցին նաեւ հոն ներկայ եղողներէն պ. պ. Սաչիկ Մարտիրոսեան և Հ. Գրիգորեան:

ՆՈՅՆ

(\*) Չը սպեր բայց կը գործածուի այն ժամանակ երբ փորձով համոզուած կըլլան, իսկ ենթադրական պարագային բայց տարակուսական ձեւով պիտի արտայայտուի:

Մ. Խ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ո Ռ Ի Ր Ք Ի Ա

Նախարարական խորհուրդը հաշորդագրութեամբ մը կը յանձնարարէ ընդունել Ֆրանսայի նախկին նախարար Ռուվէի թրքական պարտքերու միացման ծրագիրը:

Կը կարծուի որ նախարարական այդ որոշումը չուտով և առանց փոփոխութեան պիտի հաստատուի իրաւէնով մը:

— Մտուղէրի գործարանը մերժուած է 60,000 հրացան որ Թարապուղ պիտի զրկուէր: Կառավարութիւնը որոշեց է Պօլսոյ պահեստներէն վերցնել այդչափ հրացան:

— Սուլթանը կրօնական և զինուորական պատգամաւորութիւն մը կը զրկէ Եմէն, հոն խաղաղութիւնը վերահաստատելու և խալիֆայութեան վարկը բարձրացնելու համար:

Ո Ռ Ի Ս Ի Ա

Բեթերսպուրկէն կը հաշորդեն որ կառավարութիւնը Սուլթանի գնդէն 800 զինուոր հետո նահանգներ արտարած է: Այդ զօրակուցը ամբողջովին կազմաւորուած է, որովհետեւ զինուորները, Մոսկուայի վերջին զէպքերու միջոցին զէնք չեն պարպած ամբողջովին վրայ:

Նոյն վիճակին ենթարկված է նաեւ ժողային զօրքերու վաշտ մը, որովհետեւ անոնք չեն ուզած ուսանողներու վրայ զէնք պարպել Բեթերսպուրկի խոտովութիւններուն տանն:

— Բեթերսպուրկէն կը հաշորդեն որ Բաղաւայի նահանգին հինգ գաւառներ պաշարման վիճակի ենթարկուած են:

Ք Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Հաւանական կը թուի որ նախքան Ռուսիայի մէջ տեղի ունենալիք պատգամաւորներու ժողովը մայիս 9ին պօէր պետերը իրենց հետ ունենալով ամեն գոմանտայէն երկուքական ներկայացուցիչներ, Բրէթօրիայի մէջ ժողով պիտի ունենան Գիշնէրի և Միլնէրի հետ: Այդ ժողովի մէջ պիտի վիճաբանուին խաղաղութեան հիմնական կէտերը և որոշուի վերջնական պայմաններու ծրագիրը:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Հարաւային և միջին Չինաստանի մէջ պատարմութիւնը ըս պառնալի կերպարանք կատանայ: Տեղ մը ֆրանսացի կրօնաւոր մը սպաներ են:

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Բարիզի մէջ երեսփոխան շընարուեցաւ մաքուր յաջիւր քաղաքական գործիչ ու ջերմ հանրապետական Պրիսօն: Միապետականները եւ «ազգայինները իրենց ամբողջ ճիգերը թափած էին այդ իրենց անխնայ հակաակորդին ընտրութիւնը շը յաջողցնելու, եւ իրենց նպատակին հասան: սակայն քանի մը տեղերէ երկրորդ քուէարկութեան մէջ ընտրուելու մեծ հաւանականութիւն ունեցող թեկնածուներ իրենց տեղը Պրիսօնի կառավարկեն:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Բարիզի մէջ Մաիի գոնացի հրապարակագիր Սիմէօն Բաւիֆ սկսած է նախկին «Լ'էֆօր»-ի տեղ, «Մակեդոնական Նարժում» անունով թերթ մը հրատարակել:

— Էքզարխի 25ամեակը Պօլսոյ մէջ ալ շքեղ կերպով տօնուեր է, նոյն օրը բացուեր է և պուլկարական սզգային հիւանդանոցը:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Սուլթան — Հաւ. «Հայրենիք»-ի վերաբերեալ դրամը կարգադրուած է Ա. Գ. ի միջոցաւ: Ընդունած ենք նաեւ 12 ֆրանքը:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

«ԲԱՄԿԷՆ ՍԻՆԻՆ» ընթերցարանի մէջ կը ծախուի Աստուծոյ հաճանքի «Իւրացազնօրէն» ի նպատակով Աստուծոյ Միութեան:

Գինն է 1 լէֆ արծաթ: Կը ծախուի նաեւ «Էրարպի Ազատութեան Ճանապարհին»:

Գինն է 90 սանթրին

Վառնա

Խ Մ Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Կ Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցէատման, նամակագրութեան, հարսանեկան հրատարակութեան, մահազգ:

Գինները յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

«ՆԱՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒՆԻ»

ԵՐՐՈՎԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Երրօրեայ Հայ Ուս Միութեան նամակ ուղարկելու եւ սահասարակ ամէն տեսակ զինում ընելու համար

պէտք է գիտնի հետեւեալ հասցէով  
Իւնիւն Տե Զեդիլիսիան Արմ.  
Է՛տորոք ՚իւ սը Է՛ֆօլ սը Շիւի 2  
Սուխ Ժընէվ  
Կարգողիւ Յպիմեմաժողով

Իրաւը կանխիկ  
ՍԻՄՕՆ ՆԱՂԱՊԵՏ Եւ Ընկ.  
Ս. Ժիօլ. Գրիսօնօօ 5715  
(Իտալիա) Վէնէտիկ  
Դրանօր. — Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնաց սր ի մտոյ պիտի հրատարակենք նաեւ մեծագիր լուսատիպ, առաջնակարգ եւ ամենահետաքրքրական պատկեր մը, որ կը ներկայացնէ հուշակաւոր ազգային գործիչներու ժողով մը:  
Նոյն պատկերին լուսատիպ քարտերն եւս կը պատրաստենք:

ԿՕՇԻԿԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հայրապետ Սարգսեան «Բրէտանիա»-ն մեծ պօղոտային վրայ:  
Ամենաընտիր սպրանքէ պատրաստի եւ մասնաւոր պատէրով կոչիկներ. զները չափաւոր. Վաստահ Լեք թէ յաճախողները գո՛ւ պիտի մնան ամեն կերպ:  
Վառնա

ՆՕԹԱՅՈՒՆ ԵՐԳԵՐ

Ֆիլիպպի Հայկ. Երգեցիկ խումբը պատրաստ ունի հետեւեալ քառածայն երգերը:

«Մեր Հայրենիք», «Մայր Արագսի» և «Զիմպիլին Ֆաթէն կիսամ», «Լեռն ամպերը», (Կարա Մուրզա), «Ի մարտ—բաւ է որ քան», «Վրէժ—թող կորնչին» մէկական երես 15 սանթրիմ:

«Արիք Հայկազունք», «Ես լլուսեցի մի անուշ ձայն», և «Օյնազան»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) երկուքական երես 30 սանթրիմ:

«Ռազմերգ—Հայ եղբայրները» 3 երես 45 սանթրիմ:

«Գնացեք տեսէք ո՞վ է լիբերիլ զէժ» և «Լեփօ լէ լէն»—ժողովրդական պարերգ—(Կարա Մուրզա) «Կախազան»—բերին ամբողջ 4ական երես 60ական սանթրիմ:

Արտասահմանի համար մէկ երեսը 20 սանթրիմ:  
Ֆիլիպպի Հայկ. Երգ.—բար. Խումբ

Հասցէ

Յակոբ Սըվաճեան

(Ֆիլիպպի)

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна